ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

ԵԴ2/8398/02/25 ք. Երևան
25 Օգոստոսի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

Դատարանի 18.08.2025թվականի որոշմամբ վերադարձվել է «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկ ՀՄ-ի՝ պատասխանող Երևանի քաղաքապետարանի 27.05.2025թ.-ի՝ 17.04.2023թ.-ին կնքված ԵՔ-ԲՄԱԾՁԲ-23/50 պայմանագրի միակողմանի լուծումն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցվորի ներկայացուցիչը վերացրել է հայցադիմումի թերությունները և այն կրկին 18.08.2025թվականին ներկայացրել դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր

ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկ ՀՄ-ից պետք է պահանջել Երևանի քաղաքապետարանի 27.05.2025թ.-ի՝ 17.04.2023թ.-ին կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/50 պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկ ՀՄ-ի՝ պատասխանող Երևանի քաղաքապետարանի 27.05.2025թ.-ի՝ 17.04.2023թ.-ին կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/50 պայմանագրի միակողմանի լուծումն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկ ՀՄ-ից պահանջել դատարան ներկայացնել Երևանի քաղաքապետարանի 27.05.2025թ.-ի՝ 17.04.2023թ.-ին կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/50 պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկ ՀՄ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի հոկտեմբերի 03-ին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան Digitally signed by